

4. Աղքատները խնամատարութեան լուկազմակերպութեան համար անհրաժեշտ են  
 ա) վարչութեան կեդրոնացում անհատական խնամքի հետ միացած, բ) անձուկեր և ձեռքնհաս պաշտօնեաներ:

(Կը շարունակուի)

Գարեգին Սարկաւազ:

ՏԻՄՈՒԷՆՍ ԷԼՈՒՐՈՍԻ

ՆՈՐԱԳԻԵՏ ԵՐԿԸ

Ե Ի

ՆՈՐԱ ՄԻ ՔԱՆԵ ՆՈՐ ՀԱՏՈՒԱՅՆԵՐԸ

ՆԱԽՆԻ ՀԱՅՐԵՆԻՑ ԱՌԱՄ:

**Մայր Աթոռի Մատենադարանի** հ. 1955 ձեռագրից արտատպելով Արարատի նախորդ համարում իրենէնոսի անուամբ զբոսնուած երեք հատուածներ՝ մենք անուանել էինք այդ ձեռագիրը «վկայութիւնների մի ընդարձակ ժողովածու» և մէջ էինք բերել այն հատուածը, որ նորա սկիզբն է կազմում ննթագրելով թէ դա միակ ծանօթութիւնն է որից կարելի է մի գաղափար կազմել ամբողջ ժողովածուի մասին: Սակայն աւելի ուշագրութեամբ քննելով նոյն ձեռագիրը՝ մենք նրկատեցինք, որ վկայութիւնների առաջին խումբից յետոյ Պրոկղի զբուածներից յառաջ բերած մի վկայութեան՝ երկրորդ շատ աւելի ընդարձակ ծանօթութիւն կայ կցուած ժողովածուի հեղինակի կողմից, որ առաջին անգամ հարեանցի կերպով թերթեյիս իրրե Պրոկղի զբաժի շարունակութիւն էինք ընդունել: Սա խօսում է այստեղ առհասարակ երկու ընթացքի վարչապետութեան զէմ և երբ խօսքը Եփեսոսի Բ. ժողովին է դալիս, ասում է. «Պետաւորելով այսմի կրիցս երանելոյ հաւր մերոյ և եպիսկոպոսապետի և խօստովանողի Դիոսկորոսի, ընդ որում առընթեր եաք յայնժամ ևս իակ և ևրանելի իմ կըրայրն Անատոլիէս երէց», այս գոտարիտակով Բաղկեդոնի ժողովականներին՝ նա աւելացնում է. «Բանդի ոչ հաւատացեալք ճըշ-

մարտապէս քահանայապետին Բրիստոսի, ևրանելում հաւրն մերում Դիոսկորի, այդ ընդդիմացալք նմա կրկնակի մեռան. քանզի երկուս և և շարութիւնս եարարին՝ զՏէրն իւրեանց ներգրարար ուրացան, զաղբիւլն կենդանութեան, և և զընքեանս նգովեցին. սակս որոյ և և բացափրփրեն վայրենութեամբն, հալածելով զԲրիստոսի հաւատան, զյանգիմանիչս զնոսա և և զասաւղսն. Որում ստորագրութեան ձերում հուատասցուք՝ յԵփեսոսին, եթ, ի Բաղկեդոնին: Եւ վասն զի ընքեանք ներգրարար ուրացան զՏէրն մեր և և զԱստուած Յիսուս Բրիստոս և և թուին խաղաղութեամբ վարել, ոչ ուրուք նոցա հակաբանելով թեպէտ և և զԲրիստոսի խաղաղութիւնն ոչ ունին և ոչ սղան ընդ անապատութիւն երեւելադունից քաղաքացն՝ վասն այսորիկ, որպէս զրեալ է, զոչելով, և և ստուպս ուղղափառաց կախկապոսացն Տիմոթէոս առ Աստուածն իրաց հալածեաց զիս նախանձ տան Բոյ .... Զի լքին զՍա եկեղեցեաց առաջնորդք և և մոռացաւ եղեն պատուիրանացն նորա լի մարդիկ ընդ Աստուծոյ փոխադրեցին զյոյս և և քաջակերեալք կառաք և և ձիովք, որովք և և պատերապմին զհաւաս Տեառն, և և զուղղափառն ի քրիստոսասէր քաղաքին Աղեքսանդրի և և յամենայն Եփեսոսի, Եւղիպպէ, և և ի Պաղիսաինէ և և յայդս քաղաքս սպանին և և սպանանն մինչև այժմ և և հալածեն. և և զզոհարանն հոգեկան [ան]պարշտութեանն բեկին և և մանրեցին բազում անգամ և և պարապել արարին, առ ի յոչ կամել զուղղափառ զժողովուրդս հաւանել նոցայն ամպարշտութեան, և և խնդրեն զանձն իմ զփոքուս և և զանպիտան Տառայիս Բրիստոսի, և և ոչ պատահեն մինչ եթե Տէրն իմ և և Աստուած Յիսուս Բրիստոս թողացուցէ զայս լինել ըստ ինքեան կամաց, առնելով և և այսուիկ ոգորմութիւն մեծ ընդ իս անարժանի. քանզի ոչ հաւան կ[ա]ցի յերկիր առանց Աստուծոյ, ըստ Սորին Տեառնն Բանի. վասն այսորիկ և և ոչ ասեն—\* երկուցեալ զառժամանակեանս սպառնալիս թշնամեացն Աստուծոյ, քաջակերեալ ի բարեխաւտութիւնս սրբոյն և և ուղ-

\* Իր քառ չի կարդացուած:

դափառաց իմոց հարանց, ներգրարար եւ ես խորհեալ եմ դարձեալ ընդդէմ ասել նոցայն ամպարշտութեան, քաջայոյս ելով ի զաւրութիւնն Տեառն իմոց եւ Աստուծոյ Յիսուսի Բրիտոսի. ասազին ուղղափառի ամենայնիւ:

Այս խօսքերն արդէն պարզ ցոյց են տալիս, որ մեր վկայութիւնների ժողովածուի հեղինակն է Տիմոթէոս Էլուրոս\* Աղեքսանդրիոյ նշանաւոր պատրիարքը: Սա երեկ էր Աղեքսանդրիայում և պարագլուխ այն մեծ կուսակցութեան, որ Բաղկեդոնի ժողովից յետոյ զլուխ բարձրացրեց կառավարութեան դէմ և ոչ այդ ժողովի գաւանութիւնն էր ընդունել կամենում: ոչ նոյն ժողովի վճռով գահընկեց եղած Դիոսկորոսի յաջորդ Պրէտորիոս պատրիարքին: 457 թ.-ին, երբ վախճանեց Բաղկեդոնի ժողովի զօրեղ պաշտպան Մարկիանոս կայսրը՝ Տիմոթէոս իւր կուսակցութեան կողմից պատրիարք ընտրուեցաւ, իբրև իսկական յաջորդ Դիոսկորոսի և եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, մինչդեռ Պրէտորիոս սպանուեցաւ այս առթիւ ծագած խռովութեան միջոցին: Այնուհետև նա երեք տարի հաստատուն մընաց պատրիարքական աթոռի վերայ, մինչև որ Լեոն կայսրը ստիպուած եղաւ քաղկեդոնականների պահանջը կատարել և Մտիդաս զօրավարի ձեռքով նորան ձերբակալել տալ ու Խերսոն աքսոր ուղարկել: Սակայն երբ 475 թ.-ին Բաղլիլիսիոս Բռնաւորը, Զենոն կայսեր գահընկեց անելով և նորա փոխարէն գահ բարձրանալով՝ Բաղկեդոնի ժողովը մերժեց և նորա հակառակորդների կողմը բռնեց, Տիմոթէոս ևս վերագործաւ աքսորից և կրկին պատրիարք եղաւ մինչև 577 թ.-ը, երբ վախճանեց և յաջորդ թողեց իւր զլխաւոր աջակից Պետրոս Մոնզոսին: Կարելի է ասել, նա վերջին աչքի ընկնող ներկայացուցիչն է Աղեքսանդրիոյ պատրիարքական աթոռի, որ այնուհետև կորցնում է շատ շուտ իւր մանաւանդ Տիմոթէոսի անմիջական նախորդների օրով ունեցած, մեծ նշանակութիւնը:

Որ Տիմոթէոս Էլուրոս Բաղկեդոնի ժո-

ղովի դէմ մի վիճաբանական ընդարձակ զբուռածք է թողել՝ այդ մասին, ինչքան գիտենք, յայտնի էին մինչև այժմ միայն մի քանի եկեղեցական մատենագիրների յիշատակութիւններ և նոցա պահած աննշան հատուածներ: Մոցանից մէկը, Ն. դարի վերջերին սպրոզ Գեննագիոս, այդ զբուռածքը նոյն խակատիրներէն է թարգմանել, ինչպէս ինքն է յիշում: Բայց թէ նորա թարգմանութիւնը և թէ յունարէն բնագիրը կորած յիշատակարանների շարքում են դեռ: Մեր մատենագրանի ձեռագիրը ներկայացնում է ահա այդ կորած յիշատակարանի ամբողջական հայերէն թարգմանութիւնը, որի սկզբից և վերջից աննշան մի մաս միայն ընկած պէտք է լինի: Այդ յիշատակարանի մի հատուածը\* մեզ արդէն յայտնի էր Մ. Աթոռի մատենագրանի մի ուրիշ ձեռագրից, որի մէջ գտնուում է նաև մի հատուած Դիոսկորոսի թղթերից. բայց որովհետև այդ ձեռագիրը խիստ աղաւաղեալ զրութիւն է, հրատարակելու համար սպասում ենք մինչև աւելի լաւ օրինակ գտնուի, և զուր սպասած չեղանք: Մոր գտնուած երկը առաջնակարգ կարևորութիւն ունի ոչ միայն այն պատճառաւ, որ ինչպէս նախորդ յօդուածով ակնարկել էինք, նորա մէջ բազմաթիւ բոլորովին անծանօթ կամ միայն ուրիշ լեզուներով ծանօթ, հատուածներ կան նախնի հայերից զբուռածներից՝ նաև մի քանի այնպիսի զբուռածներից, որոնց անունն անգամ յայտնի չէր—այլև որ նա ինքն իւր ամբողջական խմբագրութեամբ, մեծ լոյս սփռել կարող է գաւանանքների պատմութեան մի շատ կարևոր, բայց և շատ կէտերում դեռ մութ մնացած, շրջանի վերայ: Խնդիրն այն է, որ Բաղկեդոնի ժողովի անմիջական՝ եկեղեցւոյ պառակտման համար այնպիսի օրհասական նշանակութիւն ունեցող, հետեանքները յայտնի են եղել միայն ժողովի պաշտպան ուղղափառ հայերի զբուռածներից. թէ, ինչ դաւանարանական հայեացքներ են ունեցել նոցա հակառակորդները՝ Դի-

\* Էլուրոս յունարէն բառը կատու է նշանակում. որը յայտնի չէ, թէ ինչու նորան այդ մականունն են տուել: Մեր նախնիք, գուցէ աւելի երաւացի կերպով, կուզեն թարգմանել այդ բառը:

\* Նրաննոյն Տիմոթէոսի եպիսկոպոսի աղեքսանդրացոյ ի նականառութենէ առաջին գլխոյն Լեոնի հայոյութեան ...:

տակորոս: Տիմոթէոս և այլք: այդ մասին ուղիղ դադարաւոր կարգելու համար զրեթէ, ոչ մի աչքի ընկնող անմիջական աղբիւր չկար: այնպէս որ նոյն իսկ անաշտ քննադատները ստիպուած էին համակերպել թշնամական ոգւով լցուած ժամանակակիցների կարծիքներին և թող տալ որ մինչև այժմ հաստատուն մնան և տարածուն այնպիսի նախապաշարութիւններ ինչպէս օրինակ թէ Բաղկեղանի ժողովի հակառակորդները կամ մի ընտրեալն պաշտպանները և ատիքական են եղել: Էլուրութի գրուածքը լցուցանում է ահա այս կետում զգացուող թերութեան մի նշանաւոր մասը\*:

Արարատի ներկայ համարում մենք բաւականանում են հանդէս բերելով մի քանիսը այն վկայութիւններից, որոնք հետեւում են անմիջապէս արդէն լոյս տեսած նախարանին: Վկայութիւնների այս ստուար ժողովածուից յետոյ, որ վերջանում է մեր վերև յիշատակած ծանօթութիւնով կարգում ենք հետեւեալ վերնաղբիւր. «Հակաճառութիւն երկրորդ զտոմսէն Ղեւոնդի և սահմանն Բաղկեղանի եղելոյ ժողովոյն, խնդրելով մեր և այլ օրինակ»: և այսպէս կարգաւ յառաջ են բերած 14 զուխ նայնոյութեանց, այսինքն նախադասութիւններ և ևս թիղթից, որոնց հետեւում են իւրաքանչիւր անգամ պիտառութիւնը հերձուածողաց, այսինքն քաղուածներ Նեստորի և նորա համախոհների\*\* զբուրուածներից՝ սոցա համերաշխութիւնը և ևս թիղթի հետ ցոյց տալու նպատակով: ապա մի մի ընդարձակ նախաձեռնութիւն հեղինակի կողմից, որ կրկին իւր հայեացքները հաստատում է հայրերի վկայութիւններով: Սկզբից պահասում է ուրեմն միայն Ա. զուխ նայնոյութեանց իւր պիտառութիւններով և հակաճառութեան մի մասը: Այդ կորուստն առանձնապէս զգալի չպէտք է համարել մանաւանդ նորա համար, որ շատ փաստեր այստեղ

մի քանի անգամ կրկնուած են՝ նոյն իսկ վրկայութիւնների ամբողջ հաստատմանը, ինչպէս օր. այս անգամ լոյս տեսնող ա. հաստատւածը որ Բ. հակաճառութեան մէջ կրկնուած է: \*

Սակայն այդ 14 զուխներով ամբողջ գրուածքը չի վերջանում. այլ յետոյ զից յետոյ մի կէս պատմական կէս վիճաբանական ծանօթութիւն կայ «ի ժողովն Բաղկեղանի» որին հետեւում են կրկին 5 զուխ նայնոյութեանց, պիտառութիւնք և նախաձեռնութիւն՝ վկայութիւնների, \*\* ընդհանրապէս Բաղկեղանի ժողովին վերաբերեալ, և այս ամենից յետոյ մի բաւական ընդարձակ, բայց թերի մնացած, վերջաբան, ուր հեղինակը իւր և իւր կողմնակիցների կրած հալածանքների մասին խօսելով և յորդորներ կարգաւոր ասում է ի միջի այլոց. «Եւ այս»\*\*\* և հետև Տիմոթէոսի [ևս ա]տագուննի ամենայն մար[գո]յ յարտասահմանութեան պարապաւղի սակա ոչ ուրանալ ինձ զուղիղն հաւատա և պատրաստապէս ունելով զիս մեռանել վասն Տեսան մերոյ և Աստուծոյ Յիսուսի Բրիտանոսի, ե[րա]յ զիս միտս ինքն Յիսուս և գործակցեաց ինձ և շարադրեցի նախայտրիկ մատեան Աստուծոյն բայից, որպէս ուսայ ի սրբոցն աւետարանչաց, և ի սրբոց առաքելոց, և ի սրբոց մարգարեից, և ի սրբոց և ուղղափառաց եպիսկոպոսապետաց, թերևս լսելով նոցա մոլորեալքն յուղղափառ հաւատոյն և ներգրաբար ուրացեալք զՏէրն և բաժանել զնա յիւրուս բնութիւնս և որք հաւասարեցին նոցայն ամպարշտութեան, դարձցին և պաշաւեսցեն Աստուծոյ և փախիցեն զա ի յԱստուծոյն նոցա ի վերայն կացեալ բարկութեանն: »

Այսպէս ուրեմն մեր առաջը դրած է բազմակողմանի պատմական կարևորութիւն ունեցող մի յիշատակարան, որ արժէք և պէտք էր ամբողջապէս ի լոյս ընծայել: Թէև նորա հրատարակութիւնը դժուարին և մեծ աշխա-

\* Ի դէպ կարելի է յիշել, որ նա ընդանդակում է ի միջի այլոց և մի քանի խոշոր հատուածներ Դիոսկորոսի թղթերից:

\*\* Սոցա մէջ կարելիք պատմական արժէք ունին մանաւանդ Պօղոս Սամոսացուն և Դիոսոր Տարսնացուն վերագրածները:

\* Տարբերութիւնները ցոյց են տուած ծանօթութեանց մէջ:

\*\* Այս մասի Դ. խումբ վկայութիւններից էին առնուած Դրոնէոսի հատուածները:

\*\*\* Պատռուած:

տանք պահանջող դործ է, որովհետև արդէն ինքնըստինքեան դժուարութիւնն իր կաթմազիւրը շատ տեղ մաշուած և ծակոտուած մագաղաթի վրայից մանրաքնին հետազօտութեամբ և ենթադրութիւններով միայն ըստ մասին վերարտադրել կարելի է. սակայն մենք սիրով յանձն կանենք այդ աշխատութիւնը նոյն իսկ առաջիկայ սեպտեմբերից, ցանկալի էր միայն, որ մի բարերար անձն զանուէր տպագրութեան ծախքը հոգալու համար, և Մայր Աթոռի տպարանի վերայ չձանրանար այն:

Այս անգամ լոյս տեսնող հատուածներից առաջինը Հռոմի Փիղիկոս կամ Փելիքս Ա. եպիսկոպոսի (259—274 թ.) անունով յայտնի է Եփեսոսի ժողովի գործերից\* և յիշուած կամ մէջ է բերուած նաև մի քանի եկեղեցական հայրերի գրուածներում: Ապացուցուած է համարուում որ նա կեղծուած է Ապողինարեանների ձեռքով: Բ. հատուածը հաւանականաբար նոյն այդ կեղծ թղթից է առած, բայց մենք միջոց չունինք ստուգելու թէ յունարէն բնագրի կամ ասորերէն և արաբերէն թարգմանութեանց մէջ ... հատուածը ճշգրտի մեծութիւն ունի և արդեօք Է. բնորա շարունակութիւնն է կազմում այնտեղ: Յամենայն դէպս հայերէն թարգմանութեամբ երկուսն ևս առաջին անգամ են լոյս տեսնում:

Իբրև Եփեսոսի ժողովի գործերից առնուած, թէև այժմ այդ գործերի մէջ չէ զանուում յայտնի է նաև Գ. հատուածը, ասորերէն թարգմանութեամբ միայն,\*\* որ կրում է Աղեքսանդրիոյ նշանաւոր եպիսկոպոս և յայտնի վկայ Պետրոսի անունը (300—310): Այդ հատուածը, ինչպէս նաև Պետրոս Աղեքսանդրացու անունով մնացած ուրիշ հայերէն 4 հատուածներ, իւր ժողովածուի մէջ է առել Պիտրա ծիրանաւորը: Յաջորդ երկու հատուածները, որոնց համար գժբաղդարար չի ասած թէ Պետրոս եպիսկոպոսի ճիւղերի վերաբերութիւնից են առնուած, բայց որ աւելի

հարուստ բովանդակութիւն ունին և վաւերականութեան գրոշմ են կրում՝ զեռ ոչ մի լեզուով յայտնի չեն եղել, որչափ մենք ստուգել կարող ենք, և լոյս են տեսնում այստեղ առաջին անգամ: Վերջին հատուածը նոյն պէտք է լինի Եաղազս յարութեան» գրքից ասորերէն լեզուով մնացած 7 հատուածներից մէկի հետ, որոնք լոյս են տեսել Պիտրա ծիրանաւորի ժողովածուի մէջ:\*

Բոլոր յիշածներից թէ իրենց հնութեամբ և թէ ներքին արժեքով դերազանցում են այն հատուածները, որոնք Աղեքսանդրիոյ Դիոնեսիոս եպիսկոպոսի անունն են կրում: Վերջինս իւր ժամանակի եկեղեցական հայրերի մէջ ամենից աչքի ընկնող անձնաւորութիւնն է, երբօրդ նշանաւոր ուսուցիչը Աղեքսանդրիոյ Վերախայից զպրոցիչ: Սա խիստ եռանդուն գործունէութիւն է ցոյց տուել Աղեքսանդրիոյ եպիսկոպոսական աթոռի վերայ (247—264 կամ 265 թ.) այնպիսի մի ժամանակում, երբ եկեղեցին բազմաթիւ արտաքին և ներքին թշնամիների դէմ կռիւ վարելով, օրէցօր աճող ու բազմապատկուող ազանդներն ու մոլար սովորութիւնները ճշնշելով՝ իւր համար որոշ դաւանութիւն, որոշ եկեղեցական կարգ ու կանոն պէտք է կազմակերպէր, և այդ մեծ գործի մէջ կարևոր դեր է խաղացել Դիոնեսիոս, բոլոր խնդիրների մէջ խառնուել է և նոցա մասին բազմաթիւ թղթեր է գրել: Այդ թղթերից շատերը յիշում է Եւսեբիոս իւր պատմութեան մէջ, ի թիւս այլոց նաև այն երեք թղթերը, որոնց հատուածները լոյս են տեսնում այստեղ առաջին անգամ:\*\* Սոցա առաջինից միայն մի և երրորդից երեք փոքր հատուածներ մէջ է բերել Եւսեբիոս իւր յիշատակութեան հետ իսկ ամբողջ թղթերն, ինչպէս և առհասարակ Դիոնեսիոսի բոլոր գրականական գործերը ի բաց առեալ սակաւաթիւ բեկորների անյայտ են մնում: այնպէս որ մեր յառաջ բերած հատուածները, յոյս ունինք, առանձին ուշադրութեան արժանանան պատմագետների կողմ:

\* Geschichte d. althchr. Litteratur.—A. Harnack. p. 659.  
\*\* Harnack. l. c. p. 445.

\* նոյն 446.  
\*\* Եւսեբիոս Կեսարացոյ Պատմութիւն եկեղեցւոյ. Դպր. Ը. գլ. Դ. եւ Ծ. գլ. Թ.:

մից\* Մինչև այժմ նորա անունով յայանի են եղել հայերէն 5 աննշան հասուածներ, որոնք առնուած են Պիարա ծիրանաւորի ժողովածուի մէջ և կեղծ են համարուում: — Ի զէպ է յիշել, որ Դիոնիսիոս Աղեքսանդրացին, ըստ Եւսեբիոսի,\*\* գրել է նոյնպէս մի թուղթ առ Հայս վասն ապաշխարութեան, որոց եպիսկոպոս էր յայնժամ Մեհրուածն: Օտար մատենագրութեան մէջ սա ամենահին յիշատակութիւնն է Հայոց Եկեղեցւոյ գոյութեան մասին:

Կ. Վ.

Վկայութիւնք սրբոց հարանցն մերոց. — Սրբոյն Փղղիկոսի եպիսկոպոսի Հոռոմա եւ մարտիրոսի ի թղթոյն որ առ Մաքիմոս եպիսկոպոս և առ վիճակեալ պաշտաւնեայս և եկեղեցւոյն Աղեքսանդրի:

Բայց<sup>2</sup> յաղագս մարմնաւորութեան Բանին եւ հաւատոյ, հաւատամք<sup>5</sup> ի Տէրն<sup>4</sup> մեր Յիսուս Բրիստոս, ի կուսէն Մարիամն ծրնեալ,<sup>5</sup> զի ինքն է Աստուծոյ<sup>6</sup> մշտնջնաւոր Որդին<sup>7</sup> եւ Բան, եւ ոչ մարդ յԱստուծոյ ընկալեալ,<sup>8</sup> որպէս զի այդ իցէ<sup>9</sup> առ նովաւ. քանզի ո՛չ<sup>10</sup> զմարդ ետ Որդին Աստուծոյ,<sup>11</sup> զի եղիցի այդ ոմն առ ինքեամք,<sup>12</sup> այդ Աստուած կատարեալ<sup>15</sup> էութեամբն եղև միանգամայն եւ մարդ կատարեալ, մարմնացեալ ի կուսէ.

Եւ այլ ևւ չորէն.

Հաւատամք ի Բրիստոս Յիսուս, Աստուած խոստովանելով զնա աստուածային ընութեամբն եւ ո՛չ ըստ կցորդութեան աստուածութեան. քանզի ինքն է, յորմէ կցորդութիւն առնումք աստուածաբար փշեցեալ յաշակերտան զուրք Հոգին. եւ ինքն է, որ մեռաւ մարմնով վասն մեղաց մերոց, որ եւ ապրեցոյց ի մեղաց գնաւատացեալս ի նա: Քանզի ո՛չ մարդ ըստ

\* Մի քանի ուրիշ բաւական խոշոր հաստուածներ եւս կան զեռ մեր ծնագրի մէջ Դիոնիսիոսի անունով:

\*\* Դպր. 2. գլ. 702:

1. Երանելոյ Փռղիկայ եպիսկոպոսապետի Հոռովայ եւ վկայի:

2. Իսկ. 5. Հաւատամ. 4. ի Տէր. 5. զի սրբոյ կուսէն Մարիամայ ծնեցեալն. 6. Աստուծոյն. 7. Որդի. 8. առեալ. 9. զի այդ իցէ քան զնա:

10. Եւ ոչ. 11. Աստուծոյն Որդի. 12. զի այդ իցէ քան զինքն. 15. Եւրով կատարեալ եղև համանգամայն:

մեզ Տէրն ընկալեալ եղև յԱստուծոյ այդ Աստուած ճշմարիտ, զմարդիկ ընդունելով ըստ գրելոցն: ընդունի զճեզս Տէր: Իսկ Տէր է որ ի Մարիամայն ծնեալ, որով ամենայն ըստ Պաւղոսի քանին, եւ ինքն է Աստուծոյ Բանն: Եւ նզովեմք շարչարելի զաստուածութիւնն ասացողս եւ մարդ զխաշեցեալն Բրիստոս ասացողս, եւ ո՛չ ամենայն էութեամբն Աստուած:

Սրբոյն Պէտրոսի աղեքսանդրացոյ եպիսկոպոսի և մարտիրոսի յորմէ յաղագս աստուածութեանն ասացեալ:

Վասն որոյ եւ որ ծնանելոցն է, ասէ, սուրբ է, կոչեցցի Որդի Աստուծոյ, որպէս զի ծնեալն ի մարմնի մարմին է: Վասն զի եւ Մարիամ ի մարմնի զՏէրն մեր Յիսուս Բրիստոս ծնաւ, զմի եւ զնոյն էն, այդ ոչ զայդ ոմն եւ զայդ. քան, մի՛ լիցի: Քանզի ճշմարտութեամբ ասեմք Տէր զՅիսուս, առաւել հաւատալով թէ Յիսուս է Որդի Աստուծոյ, եւ եթե Յիսուս է նոյն իսկ ինքն Բրիստոս, ըստ որում եւ Առաքելոյ զկնի վերանալոյն ինքն Յիսուս երեւեցաւ:

Եւ այլ ևւ չորէն:

Զայսոսիկ եւ զնմանն այսոցիկ ամենայն ուրեք զրոց վերազրելով ցուցանեն, եթէ եղև Բանն մարմին, եւ երեւեցաւ մարդկան Յիսուս Բրիստոս Որդին Աստուծոյ, որպէս եւ ամենայն մարդիկ, ըստ նմանութեան, առանց մեղաց. քանզի եթէ ըստ նմանութեան եղև էր Բանն մարմին, ըստ որում եւ մարդիկ ոչինչ մեծ, եւ ոչ ատար եւ զարմանալի այդ ինչ կամել լինել զԲանն մարմին ի մերմէ տկարութենէս: Իսկ եթէ ըստ խորհրդին Աստուծոյ եւ Հաւրն ամենեցուն յաղագս մերոյ փրկութեան եղև մարմին Աստուածն Բանութրի ի պատուոյ, այս շնորհ Աստուծոյ եւ առաւել կարողութիւն ի նմա աստուածային, ծնեցելոյն յաղագս մեր մարդոյ, որով խոստովանիմք եւ զնա կցորդութիւն ունել տկարութեանս մարդկութեան, զԱստուածն Բանութեամբ Որդի Աստուծոյ փառաւորեմք, եւ զոհանամք, խոստովանելով զիշխանութիւն ամենեցուն տուեալ նմա ի Հաւրէ. եւ շնոր-



մեր աշխուժիք հաւատոց մերոց բանիք զոտս քարկոծեսցուք: եթե ոչ մերձ առ Քրիստոսի խորհուրդն գայցեն,<sup>1</sup> կամ փոխազործէ եւ տպականէ, կամ ո՛չ Աստուած, կամ ո՛չ մարդ եղեալ, կամ ո՛չ մեռանել եւ ո՛չ յառնել, կամ զոլ ոչ զգալն դատել զկենդանիս եւ զմեռեալս: եւ կամ այդ ինչ աւետարանելովք ըստ որում աւետարանեցան, նզովեալ եղիցի, ասէ Պաւղոս: Իսկ եթէ զյաղագս յարութեան որ անարգէ բան, այսպիսին ընդ մեռեալս ահա կարգեսցի, յաղագս այսոցիկ, զի ծայնակցապէս ունիցիմք, եկեղեցիք առ եկեղեցիս եւ եպիսկապոսք առ եպիսկապոսս. եւ երիցունք առ երիցունս, ինամամուծեալք խաւսիցիմք: Իսկ յաղագս ըստ միջէցն դատաստանք եւ գործք, թե որպէս զարտարոյան մերձ եկեալս վայել է ընդունել, եւ որպէս զի ներքան դիտաւորել, ըստ տեղեացն առաջնորդաց հրամայեմք, որք ըստ աստուածային ձեռնադրութեանն ի հարկաւորութիւնս յայս կարգեցան, զի զարտաւորութիւնս զորս եւ գործիցեն, ընդ ամենայնի հատուցանիցեն Տեառն:

Նորին յառաջնոյ թղթոյն որ առ Քրիստոս  
Էպիսկապոսոցէրն Հռովմա:

Քանզի գրեցեր այսպէս, զաստուածաւեր արինադրութիւնն արտադրելով որում ստեպ ստեպ պատահելով ահա եւ յիշողութեամբ<sup>2</sup> ունիմք, քաւակոն եղիցի միայն ձեռնադրութիւն այնոցիկ, որք խոստովանեցին, եթե պատճառանաւք եւ եթե ճշմարտութեամբ, զԱստուած Ամենակալ, եւ Քրիստոս եւ զՀոգին սուրբ ի մկրտութեանն: Իսկ յորոց վերայ<sup>3</sup> ոչ կոչեցաւ անունն ո՛չ Հար եւ ո՛չ Ռոդոյ, եւ ո՛չ Սրբոյ Հոգոյն գայնասիկ արժան է մկրտել, եւ ո՛չ վերստին մկրտել: Այս հաստատուն եւ անշարժ փարդապետութիւն եւ առտուութիւն,<sup>4</sup> սկսեալ ի Տեառնէ մերմէ, յետ ի մեռելոցն յարութենէ, պատուիրելով աշակերտացն. Գնացէք աշակերտեցէք զամենայն ազնս, մկրտելով զնոսս յանուն Հար եւ Ռոդոյ եւ Հոգոյն Սրբոյ, իսկ պահեցեալ եւ լցեալ<sup>5</sup> ի փոխանորդաց

նորա, երանելեաց առաքելոցն, եւ հանգուցեալ ի սրբում եկեղեցւոջ Աստուծոյ, եւ քաղաքակցեալ ամենեցուն նախ բան զմեզ եպիսկապոսաց, որպէս գրեցաւ,<sup>1</sup> եւ մինչ ի մեզ ժամանեալ, իբր զի բան զամենայն աշխարհ հաստատնագոյն<sup>2</sup> է. բանզի Երկինք, ասէ, եւ երկիր անցցեն, իսկ Բանք իմ ո՛չ անցցեն:

Նորին առ Նոյն յերրորդ թղթոյն:

Իսկ եթե զնախանձ ունել Աստուծոյ եւ ի բոլոր սրտէ զնա սիրել հաւատ զմեզ յորդորէ, եւ միայնս պիղծս վարկանել սրտս որք զարդարն մի եւ զմիայնն արհամարհն Աստուած, եւ զերկնի եւ զերկրի եւ զամենայնցն Արարիչ եւ Տէր նուաստագոյն ուրումս այրոյ եւ անարգագոյն զոլ ասելով, եւ յամենաբարեոքն շարութիւն առ յարեն, եւ կամ ո՛չ զսիրելին նորա, զՔրիկիչն մեր Յիսուս Քրիստոս որ զինչ է հաւատան, այդ զքրանչելի անարեւութիւնն եւ մեծ խորհուրդն լուծանելով, զոմանս ո՛չ Աստուած եւ ո՛չ Ռոդի զոլ հաւատարով Աստուծոյ, իսկ զայդս ո՛չ մարդ եղանել եւ կամ մարմնով եկեալ, այդ երեւոյթ եւ ստուեր զոլ ասելով, զայսոսիկ զամենեսեան քարոք Յովհաննէս ի ձեռն թողթոյն<sup>3</sup> նեոինս կոչեաց: Եւ եւս առ նուիս յաղագս սոցա եւ մարգարէն վկայեաց ասելով. «Չատելիս Քո, Տէր» ատեցի, եւ ի վերայ թշնամիաց Քոց մաշեցաւ, կատարեալ ատելութիւն ատեցի զնոսս, ի թշնամիս եղեն ինձ: Եւ այսոսիկ են ամենեքեան, որք զներձուածողական մակձայնութիւն, առ մեզ ունին: Իսկ եթե ամենեւին առ փոքր մի թողացուցուք<sup>5</sup> եւ սուկողմեսցուք նոցա, ո՛չ եւս ի բոլորն սրտէ զԱստուած սիրելն ամբողջ պահեսցի, որ ի մեզ ամնլ եւ առաւելուլ միշտ վայել է:



1. լուսանցքի ծանօթութիւններն եղծուած են այս էջում:  
2. յիշատակաւ. 3. առ որս. 4. աւանդութիւն.  
5. կատարեալ.

1. իբրեւ զնկարագիր եղեալ. 2. Տեո:  
3. լուսանցքում թող—շարունակութիւնը կտրուած է, երբեք թողոցն պիտ լինէր. 4. կոչո—(երբեք կոչումս)  
5. թոյլ տուես(ցուք):